Հաստատում եմ՝

ԵՊՀ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ
ՊՐՈՌԵԿՏՈՐ ԷԼԻՆԱ ԱՍՐԻՅԱՆԻՆ

07.10.2021

ԿԱՐԾԻՔ

Ռուզաննա Նորիկի Սայիյանի «Հովհաննես Գրիգորյանի պոեզիայի առանձնահատկությունները» թեմայով ժ. 01. 02 («Նորագույն շրջանի հայ գրականություն») մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին: (Ընդունված է ԵՊՀ հայ նորագույն գրականության ամբիոնի 2021 թ. հոկտեմբերի 7-ին տեղի ունեցած նիստում, արձանագրություն թիվ 2)

Ելույթ ունեցան պրոֆ. Վ. Գաբրիելյանը, դոց.դոց. Լ. Սեյրանյանը, Ա. Արզումանյանը, Ս. Գրիգորյանը:

Նշվեց, որ Ռուզաննա Նորիկի Սայիյանի «Հովհաննես Գրիգորյանի պոեզիայի առանձնահատկությունները» թեմայով աշխատանքը կատարվել է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում, որտեղ գործող ԲՈԿ-ի Գրականագիտության 003 մասնագիտական խորհրդում էլ կայանալու է պաշտպանությունը: Խորհուրդը այն կարծիքի է ուղարկել ԵՊՀ հայ նորագույն գրականության ամբիոն՝ որպես առաջատար կազմակերպության:

Նշվեց, որ Ռ. Սայիյանի «Հովհաննես Գրիգորյանի պոեզիայի առանձնահատկությունները» թեմայով գրված ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և օգտագործած գրականության ցանկից: Ուսումնասիրությունը թեմայի քննարանման հաջողված նմուշ է: Ներածության մեջ որոշարկվում է հարցի պատմության շրջանակը, առաջադրվում են հետազոտության նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, մեթոդաբանական հիմքը, տեսական և գործնական նշանակությունը, տրվում է աշխատանքի ընդհանուր նկարագիրը:

Ատենախոսության առաջին գլխում՝ «1960-ականների գրական նոր սերնդի ուղին», հեղինակը համակարգում է պատմական այդ ժամանակաշրջանի գրական կյանքի

գործընթացները՝ իրավացիորեն նկատելով, որ 20-րդ դարի երկրորդ կեսը նշանավորվում է հասարակական-քաղաքական էական տեղաշարժերով, հնի և նորի փոխհարաբերակցության մասին հակասական ընկալումներով, մարդու և աշխարհի փոխհարաբերությունների խոհափիլիսոփայական հայացքների շրջադարձով, անհատական ինքնագիտակցության հայեցակարգերի արթնացումներով: Ձևավորված իրավիճակն իր յուրահատություններով կենսական հող նախապատրաստեց գրական նոր սերնդի ինքնատիպ մտածողության և գաղափարական մտայնության համար: Զարգացման նոր ուղի հարթվեց պոետական նոր ոճի, լեզվի, թեմատիկայի, կյանքի նոր իրողությունների վերաիմաստավորման համար: Եվ 1960-ականներին ձևավորվեց գեղարվեստական նոր ուղղություն, գեղարվեստական գիտակցության նորագույն ձև: Այս ուղղության սկիզբը մեզանում նշանավորվեց Հ. Էդոյանի, Հ. Գրիգորյանի, Ա. Հարությունյանի և այլ անուններով, որոնց նորարարական ստեղծագործությունները յուրովի հարստացրին հայ բանաստեղծական մտքի ճանապարհը:

Սայիյանը, ամբողջացնելով 1960-ականների բանաստեղծական շարժման գրական ճանապարհի առանձնահատկությունները, իրավամբ ընդգծում է, որ հայ պոեզիայում Հովհ. Գրիգորյանը բերեց իր յուրինակ, արդիական և ինքնատիպ բանարվեստը:

Աշխատանքի երկրորդ գլխում՝ «Հեգնանքը Հովհաննես Գրիգորյանի պոեզիայում», Սայիյանը, հենվելով գրականագետների գնահատումների վրա, շեշտադրում է Գրիգորյանի գրական ճանապարհի երկու շրջանների՝ մինչանկախության և հետանկախության շրջանի պոեզիայի առանձնահատկությունները, նրա բանաստեղծական խոսքի ինքնատիպ որակները:

Մինչանկախության և հետանկախության շրջանաբաժանման հերթագայական մոտեցումով հեղինակին հաջողվել է պատկերագծել գրիգորյանական բանաստեղծական մտածողության յուրակերպությունը, նրա գրատարածության աշխարհայացքային խարիսխներն ու պատկերազգացողական մթնոլորտը: Պոեզիան դիտարկելով իբրև կեցության բարձրագույն ձև՝ Սայիյանը Հովհաննես Գրիգորյանի բանաստեղծությունը քննել է ժամանակի գրապատմական իրականության հոգեբանական և փիլիսոփայական հարցադրումների համապատկերում, այլաբանական հեգնանքի, «ժանրի դեմոկրատացմանը» ծառայող՝ արձակի պատումին ներհատուկ բնորոշ կշռույթի, ինտելեկտուալ կառույցի շեշտադրումով:

1960-ականների նոր սերնդի գաղափարագեղագիտական խիզախումները քննելով ժամանակի գրական բանավեճերի, գրաքննադատական տարամետ ընկալումների համաձիրում՝ ատենախոսության հեղինակը երևույթը համարում է ազգային գրականության զարգացման ներքին օրինաչափություններից բխող, ժամանակի խորագնա ընթացքով պայմանավորված իրողություն, առօրյային ուղղված ինքնօրինակ դիմադրության,

գոյաբանական առերեսումների արտահայտություն: «Արձակունակությունը» համարելով բանաստեղծական ազատ մտածողության դրսևորում՝ Սայիյանը բացորոշում է գրիգորյանական հեքնանքի նկարագիրը՝ իբրև «մտքի ստրատեգիայի» և «հոգեբանական պաշտպանության» հայտնակերպում, «հեղինակի ասելիքի ստեղծագործական սկզբունք»: Ուշագրավ նկատումներ են արվում Հովհաննես Գրիգորյանի մտահայեցողությանը ներհատուկ, ժամանակի իմաստավորմանը ծառայող պատկերակերտումների համակարգային ըմբռնումներում, հեղինակի ներքին կոնֆլիկտի հաղթահարմանն ուղղված ինքնարտահայտման, ինքնաբացասման ու ինքնահաշտեցման պարադոքսային խոհազգացական անցումների մեկնաբանություններում: Մատնանշվում է գրիգորյանական խոհապրումի ներամփոփ նկարագիրը, բայց դրանով հանդերձ՝ նաև «ասելիքի համոզմունքի ուժը»: Բանաստեղծի գրական կերպարի առանցքումով հատկանշվող գրատարածության մեջ գրիգորյանական հեգնանքի տարողունակ պրիզմայի, զավեշտականի քողավորումով հայտնակերպվող եղերականության, քաղաքացու, մտավորականի, հայի ու ժամանակի մարդու դիտանկյունների մատնանշումով հիմնական գծերով ներկայացվում են սիրերգությունը, հայրեներգությունը, հայրերգությունը, ժամանակի խորհուրդը, գրական ու սոցիալական հարցադրումները, բնապատկերը, հիմնականում հետանկախության շրջանում գերակայող քաղաքական մտորումները, արժեբանական ըմբռնումները:

«Հովհաննես Գրիգորյանի պոեզիայի բանարվեստը» վերնագրով ընդհանուր գծերով հաջողված երրորդ գլխում հիմնագծային անդրադարձով ներկայացվում է բանաստեղծի՝ իբրև մտահղացման իրականացման միջոց և քերթվածի էություն ու նպատակ դիտարկվող մետաֆորային պատկերակառույցը: Ատենախոսը կատարում է հետաքրքիր դիտարկումներ՝ ընդգծելով «Գրիգորյանի նոր պոեզիայի ասելիքն ու անելիքը, որի արդյունքում ձևավորվում է նոր պոետական պատկեր, նոր լեզու, նոր բովանդակություն»: Ատենախոսը հետաքրքիր դիտարկումներով արժևորում է գրիգորյանական բանարվեստը՝ ընդգծելով նրա պատկերային միջոցների ինքնատիպությունը, գեղագիտական համակարգի առանձնահատկությունները: Ուշագրավ են տառապանքի ընկալումը որպես ձեռք բերված ազատության, սեփական խոհապրումի ու վճիռների համար վճարված փրկագին, կյանք-անապատ և մարդ-ավազահատիկ օպոզիցիոն միասնության շեշտադրումը, ոգի-մարմին-հոգի խախտված եռամիասնության «մենտալ օրգանի»՝ սրտի պատկերի քննաբանումները, բառային հարակրկնությունների, հակադրությունների և պարադոքսայնության, հոետորական հարցումների, բանաստեղծական մտահոսքի թավալումն արագացնող բազմաշաղկապության, բացթողումների բանարվեստային դերի գնահատումները:

Աշխատանքի վերջում համակարգվել են հետազոտության արդյունքում կատարված հետաքրքիր եզրահանգումները:

Ընդհանրության մեջ հաջողված աշխատանքի համար, այնուամենայնիվ, շահեկան կլիներին հետևյալ դիտարկումները.

1. Սայիյանը Հովհաննես Գրիգորյանի պոեզիայի արժևորումը կատարում է գրական միջավայրից կտրված: Առավել հետաքրքիր կլիներ, եթե գրիգորյանական արվեստի ինքնատիպությունը ցույց տրվեր ժամանակակից գրողների ստեղծագործությունների համեմատական մեթոդաբանությամբ: Հովհաննես Գրիգորյանի բանարվեստի արժևորումն անհամեմատ կշահեր ժամանակի այլ բանաստեղծների պատկերային համանման լուծումների առանձին զուգահեռ դիտարկումների պարագայում:
2. Չնայած հետմոդեռնիզմի գեղագիտության առանձին հիշատակումներին (էջ 84)՝ կարծում ենք, ճիշտ կլիներ, եթե գրիգորյանական պատկերամտածողությունը ներկայացվեր հենց հետմոդեռնիստական աշխարհայեցողությանը բնորոշ նշանների՝ տարածաժամանակային փակուղու, չավարտվող և չսկսվող ժամանակային չափումների ճեղքվածքում հայտնված մարդու ձանձրույթի ու հեգնանքի, նոր սկզբի ու նոր բառի որոնումների, ջրհեղեղից բացի՝ նաև ապոկալիպտիկ այլ նշանների համակարգային հայեցումով:
3. Աշխատանքն անշուշտ կհարստացներ նաև միջտեքստային շերտերի տեսանումը, քարանձավի արքետիպից բացի՝ նաև ծառի արքետիպի, ծառ-մարդու մետաֆորի, փողոցի և զբոսայգու քրոնոտոպի, աչքերի խորհրդապատկերի համակարգային քննաբանումը: Ուսումնասիրության մեջ առկա անդրադարձներն անհրաժեշտ էր կիզակետել և տեսանելի դարձնել իբրև Գրիգորյանի պոեզիայի պատկերակառույցը կազմող նշանային համակարգ:
4. Աշխատանքում երբեմն նկարագրական խոսքը, բանաստեղծությունների վերապատմումը կամ բնագրային ծավալուն մեջբերումները ստվերում են հեղինակի վերլուծական միտքը:
5. Ատենախոսության մեջ երբեմն նկատվում են հղումների անճշտություններ: Կան նաև կետադրական ու քերականական որոշ սխալներ (էջ 3,12, 26, 30, 34, 41, 55, 59, 60 և այլն): Առկա են տեխնիկական վրիպակներ, անհարթ ձևակերպումներ (էջ 19, 30, 35, 53, 56, 69, 78, 87, 88, 93, 120, 121, 122, 128, 136, 138, 145, 149, 150 և այլն), ինչպես նաև կրկնվող հատված (էջ 68 և 81):

Այսուհանդերձ, կատարված դիտողությունները և նկատումները չեն ստվերում ուսումնասիրության վերոնշյալ արժանիքները, և ատենախոսությունը կարելի է հանձնարարել հրապարակային պաշտպանության:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ռուզաննա Նորիկի Սայիյանի «Հովհաննես Գրիգորյանի պոեզիայի առանձնահատկությունները» ուսումնասիրությունը բավարարում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջները, ուստի և այն կարելի է երաշխավորել հրապարակային պաշտպանության:

Հայ նորագույն գրականության
ամբիոնի վարիչ՝ Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Նիստի քարտուղար՝ Մ. ՂԱԶԱՐՅԱՆ

Ամբիոնի վարիչի ստորագրությունը
հաստատում եմ՝ ԵՊՀ գիտքարտուղար Լ. ՀՈՎՍԵՓՅԱՆ